ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ Ն. Հովհաննիսյանի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի զեկուցագիրը, <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Վարդանյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 4500000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 4511 հոդված՝ <<Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-ի տրամադրվող սուբսիդիայի գումարը ավելացնելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ Ն. Հովհաննիսյանի 2024 թվականի դեկտեմբերի 6-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 394000 ՀՀ դրամ տեղափոխել 08.6.1 ծրագիր 4269 հոդված՝ Սիսիան համայնքի կարիքների համար ամանորյա փաթեթներ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող Հ. Ստեփանյանի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից 90000000 ՀՀ դրամ տեղափոխել հետևյալ ծրագրերին՝

1. 05.1.1 ծրագիր 5121 հոդված 18000000 ՀՀ դրամ՝ Սիսիան համայնքում սանմաքրման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, թվով 1 հատ ինքնաթափ բեռնատար ձեռքբերելու համար և 04.5.1 ծրագիր 5121 հոդված 72000000 ՀՀ դրամ թվով 4 հատ միկրոավտոբուսներ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի եկամուտներն ավելացնել 1555000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որպես ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՄՈՒՏՔԵՐ՝ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ համայնքում գործունեություն իրականացնող հանքերի կողմից:

1. Վերոնշյալ 1555000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամից ավելացնել 09.1.1 (ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ) ծրագրի 5113 հոդվածին, որն տրամադրվում է համայնքում գործունեություն իրականացնող հանքերի կողմից և պլանավորվում է ֆոնդային բյուջեի / ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ ՍՏԱՑՎՈՂ ՄՈՒՏՔԵՐ՝ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ / եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

19.12.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 1555000 (մեկ միլիոն հինգ հարյուր հիսունհինգ հազար) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

19.12.2024թ.